

Թագրել է տրուում թէ իրր թէ Հայաստանում կար մի երգ որ սկսուում էր այսպէս. «Ուլունք Շամիրամայ ի ծով»: Սակայն Հ. Ստեփանէն մտանում է որ «բան» բառը որ առաջին տպագրութեան մէջ «խօսք» է թարգմանել, երկրորդ տպագրութեան մէջ, անշուշտ Շիրոհ. Միաբանի անհիմն նկատողութեան ազդեցութեան տակ ² «երգ» դարձնելով, ինքն այդ նկատողութեամբ սոսկ մի բառախաղ է անում, քանի որ նորա թարգմանութեամբ էլ ենթադրուում է, թէ Շամիրամի մասին մի երգ կար, միայն ոչ ուրիշների լեզուից սասած, այլ Շամիրամի բերանը զրած:

Թէ այդպիսի երգ եղել է՝ կարելի չէ հարկաւ մակարեւել «բանք» բառին ըստ քմահաճոյս տուած մի մեկնութիւնից միայն: Ուստի և «բան» բառի իմաստը պահելով, պէտք է «բան ի նմանէ» թարգմանել «նորա (սասած) խօսքը»: Եւ կարիք չկայ որ «Ուլունք Շամիրամայ ի ծով» նոյնպէս անպատճառ երգ եղած լինի կամ մի երգի առաջին տողը, ³ քանի որ զա կարող է և մի սասած «բան», մի տեսակ տառապ որ խօսք լինել, որ իրր Շամիրամ ասել է: Ոչինչ չէ ասացուցանում այն, թէ «մեռնելուց առաջ, կամ մինչև իսկ մեռնելուց յետոյ, զիւցազնի նրզը» որի մէջ ողբացում է անցեալ զօրութիւնն ու փառքը, շատ սովորական է ժողովրդական վէպում: ⁴ Մոռացում է, որ աւելի ևս սովորական է զիւցազնի խօսելով մեռնելը, օրինակ, Դաւիթ, Ռոստամ, Ռուբինդ խօսելով են մեռնում: Եւ մեռնող մարդոց վերջին խօսքը շատ անգամ յիշուում է յետագայում, երբ նոցա պատմութիւնն են անում: ⁵

(Երգի մասին)

Մ. Արեղեան

բարգմանում է «նորա պատմութիւնը» հմմտ. «Իրականութեանը» (Ա. մե), որ հ. Ստեփանէն բարգմանում է «նորա մասին երգը»: Ի՞նչ հետաքննարկարար:

1. Խոր. պատմ. բարգմ. եր. 372. ծան. 110.

2. Խոր. պատմ. Ռուսում. եր. 71. ծան. 1:

3. Ժրգր. Հայկ. Աշխատ. եր. 123:

4. Միաբան. Խոր. Պատմ. Ռուսում. եր. 71.

5. Փ. Աղապարի մեջ (Ե. դպր. Բ. գլ.) կարդում ենք, որ Մուշեղ Մամիկոնեանը Պարսից Շապուհ բագաւորի կանանցը, սոսկ իւր մեռնի զրի հիմ ընկել, պատմութեանը կերպով արձակում է: Պարսից բագաւորը զարմանում է

ՀԱՅԵՐԸ

ՄԵՐԳԵՐԵՆԵԿԱՆ և ԵՇԽԵՐԸԵՐԵԿԱՆ

ՏԵՍԱԿԵՏԻՅ.

(Շարունակութիւն) *

Դրացի ազգութիւններից Հայերին իրր երբախիկեֆաշների աւելինմանում են լեռնաբանակ Հրէայք (ըստ Շանարի և Էրկերտի—85¹), ըստ Պանտիւխովի—85²) և Այսորիք (ըստ Շանարի 89³, ըստ Պանտիւխովի—87⁴), ապա Վրացիք և Լէզգիները. մինչդեռ օրինակի համար, իմերեալները, Միւղերները, Ափսաղցիք, Աւարպատականի Թաթարները, Պարսիկները, Բրդերը—ունին ոչ այնքան լայն գլուխ (գլխի որոշիչը, միջին չափով, 83—77⁵), այլ աւելի երկարաձիգ: Սակայն, հարկ է նկատել որ գլխի ձգեալ տրամագծի կարճանալուն, կամ աւելի ծիշղը, ծոծրակի տափարակ լինելուն նպաստում է մասամբ Հայերի մօտ (և կովկասու մի քանի ուրիշ ազգութիւնների մօտ) գլխի անգիտակցական և արհեստական աճեութիւնը, որ յառաջ է գալիս երկխաներին երկար ժամանակ օրօրոցում պահելու սովորութիւնից: Երեւոյի փոքրիկ քնքոյշ, դիւրաթեք գլուխը, արդէն իւր յատուկ ծանրութեամբ, ծանրանալով օրօրոցի յատակին՝ տափականում է ծոծրակի մօտ, որ յետոյ ամբողջ կեանքում մնում է այնպէս, արտայայտելով անզուգաչափ տեք, այսինքն թեքուած գէպի աջ կամ ձախ նայելով, թէ պառկած մանկան գլուխը յաճախակի որ կողմն էր դառնում: Ծոծրակի այս կերպ տափակ լինելն ա-

յորա այս վերամեծ արարքի վրայ. «Եւ եր ի ծանանակին յայնմիկ երիվառն Մուշեղի ձեռնակ մի մի. իսկ բագաւորն Պարսից ... եւ նկարել զսաշ ի պատկեր զՄուշեղ ձեռնակաւ. և ի ծամ ուրախութեան իւրոյ ղեկը զսաշն առաջի իւր, և յիշէր հաճապազ զնոյն քանս ասելով՝ քե ձեռնակամիկ զինի արքի»:—Երեւակայեցիք այս պատմութեան բովանդակութիւնը նորեկացին նոյնպիսի սեղմ ոճով մեջ քերէր, ինչպիս Եսայիսի անասիլը և զերջացեալ այսպիս. «Եւ քան ի նմանի (սապիւնայ) ձեռնակամիկ զինի արքի»: Միք «ձեռնակամիկ զինի արքի» կը լինէր մի երգ և ոչ քե մի խօսք: Այսպիս և «Ուլունք Շամիրամայ ի ծով» մի խօսք է միայն և ոչ քե երգ:

* Տես. Արարես 1899 թ. համար Ա. եր. 31:

մենքի մօտ պարզութեամբ չէ նշմարուում։
Շանտրի հետազօտելով մի քանի չափահաս
Հայ անհատներ, գտնում է նոցա մօտ յիշեալ
յատկութիւնը 37^{0}_{10} միայն։ Ընդ սմին այն
գլուխները որոնք չեն կրում իւրեանց վրայ
այդպիսի արհեստական տձեութեան հետքեր,
նոյնչափ լայն էին և կարծ. իսկ այս հանդա-
մանքը վկայում է թէ Հայերի խիստ կար-
ճազուիւ լինելն՝ ծոծրակի արհեստական կեր-
պով տափարակեցնելու արգասիքը չէ, այլ
ի բնէ է և տիպարական։ Գլուխը, իւր նշանա-
ւոր լայնութեամբ հանգրձա՛ւք է ընկնում
նաև բարձրութեամբ և գազաթի միջնավայրը
հանդիսանում է իրր ամենարարձր կէտ։ Հա-
յերի երեսը ըստ չափու, միջին թուով, ու-
րոշուում է այսպիսի գծերով։ Ճակատը ուղիղ
է, լայն, միջակ բարձրութեամբ, աչքերի
միջի տարածութիւնը ոչ այնքան լայն, այտե-
րը դուրս ցցուած չեն, երեսը առհասարակ
չափաւոր երկարութիւն ու լայնութիւն ունի։
Քիթը մեծ է, մասամբ երկար ուռած, լայն
քամակով, երբեմն կորաքիթ կամ արծուա-
քիթ, շատ սակաւ կարճ ու լայն, քիթի որոշ-
չի զօրութեամբ (ըստ յարաբերութեան մե-
ծազոյն լայնութեան քիթի առ երկայնու-
թիւնն՝ ուղղահայեաց ուղղութեամբ) Հայերը
պիտի վերադասուին լիպտօրինների (նեղ քիթ)
շարքին։ Բերանը միջակ մեծութիւն ունի։
Նիւթուկը—յաճախ հաստ ու ոլոր են, բայց
այլ գէպքերում—բաւականին բարակ։ Աչքե-
րը լայն են, օժտուած թաւ յօ՛քերով և եր-
կար արեւանուէքներով, և նոցա (աչքերի)
երանգը ըստ մեծի մասին մութ—շագանա-
կազոյն կամ սևորակ է, սակաւ պարզ—շագա-
նակազոյն, գորշ և իրր բացառութիւն՝ կա-
պոյտ։ Գլխի մազերն առ հասարակ նոյնպէս
մթին գոյնի են, սև կամ մութ—խարտեաշ, սակաւ
բաց խարտեաշ և չէկ, մինչև անգամ
մանուկների աչքերը ու մազերը առաւելապէս
մութ գոյն ունին։ Նրեան կաշուի գոյնը թուխ
մարմնոյ միւս անդերում աւելի պարզ է։
Ականջները միջակ մեծութեամբ են, յաճախ
իրր ուռած, ատամները ուղիղ են, ոչ խոշոր,
բաւականին մօտ են շարուած միմեանց, խմա-
տութեան ատամները ուշ են երևան գալիս։
Մտամների փտելն շատ յաճախ է պատահում

մինչև անգամ գիւղացւոյ մէջն էլ հաղուա-
ղիւս բան չէ։

Համեմատելով վերը բերած բնորոշ դը-
ծերը՝ կովկասու միւս ազգութիւնների ար-
տաքին յատկութիւնների հետ, կարելի է նը-
կատել, որ հայկական տիպարը թէպէտ և
պատահում է Թաթարների, Էդգլների,
Վրացիների և այլոց մէջ, այնուամենայնիւ,
միջին թուով առած, դա որոշուում է ուրիշ
ազգութիւնների միջին տիպարից։ Այսպէս
օրինակի համար, Վրացիները, Իմերեկները,
Պշաւերը, Խեզսուրները, Ափխազները, Սվա-
նետները—յայտնի են իրանց բարձր հասակով
(164—169), մազերի սակաւութեամբ մարմնոյ
վրայ, նոցա պիտիւրը և մօրտքը ուշ են բըս-
նում, մազերը ըստ մեծի մասին բաց—խար-
տեաշ են, աչքերը բաց—կապոյտ, գլուխը ոչ
լայն, երեսը երկար, յաճախակի այտերը դուրս
ցցուած, քիթը առանձին ձև ունի, մերթ
երկար ու նեղ, մերթ լայն ու հաստ։ Այսո-
րինները և լեռնական Հրէայք աւելի նման են
Հայերին գլխի ձևով, մազտութեամբ, մազերի
գուշով, վերջինները նաև հասակով, բայց
Այսօրինները աւելի բարձր են և, Պանտիւսո-
վի չափելովը, երեսի երեք մասերից վերինը
(ճակատը) և ստորինը (ծնօտը) աւելի սակաւ
են դարգացած քան թէ Հայերինը, այն ինչ
միջինը (քիթը) նկատելի կերպով մեծ է, և
այդ երևում է բոլոր երեսի երկարութեան
վերայ։

Ատրպատականի Թաթարները, Զրգերը,
Թաթերը նոյնպէս բարձրահասակ են, նեղ
գլխով (գլխի որոշիւր 78,7—77,6), երեսը չոր
չոր, քիթը աւելի բարակ ու երկար, թէև
Թաթարների մէջ ոչ սակաւ պատահում են
աւելի լայնազուլս անհատներ, Հայերի նման,
և ուրիշները, որոնք տափաքիթ են, դուրս
ցցուած այտերով, այդ հանդամանքը մոնղո-
լական արեան խառնուրդի ապացոյց է, ըստ
երևութիւն։

Հայկական տիպարը առհասարակ շատ
տարածուած է Փոքր Ասիայում և այդ ոչ
միայն այն վայրերում, ուր Հայերը կազմում
են խիտ բնակչութիւն, այլ և սահմաններից
էլ դուրս։ Տաճիկների, Ասորոց, Եդեսիների մէջ,
Պրոֆ. Փ. Փօն—Լուշան, որ մարդարանական

հետազոտութիւններ և կատարել Փոքր Ասիայում մանաւանդ հին Լիւկիայի սահմաններում կարողացաւ համազօրել որ յիշեալ երկրի արդի բնակիչների մէջ աչքի են ընկնում երկու միանգամայն տարբեր տիպարներ՝ մինը լայնագլուխ խիստ բրախիկեֆալ կարճ ու բարձր գանգով իսկ միւսը—նեղգլուխ գոլիխոկեֆալ երկար ու ցածր գանգով։ Երկու տիպարներն էլ հաւասարապէս պատահում են ինչպէս ծածիկների և Յոյների, այնպէս և Հայերի մէջ։ Բայց վերջիններս մէջ կարճագլուխների թիւն ըստ երևութին գերազանց է (տես. F. V. Lusch. Die Tach-tadschy und andere Ueberreste der alten Revölkerung Lykiens. „Archiv d. Anthropologie“. XIX, 1890.)։ Լուշանը չափեց 120 Հայերի գլուխները և հնարաւորութիւն ունեցաւ ուսումնասիրելու 26 հայկական գանգեր և գոքա բոլորը լայնագլուխներ էին որոնց լայնութեան որոշիչն է 80-ից մինչև 91)։ Լուշանը արամաղիր է այս բրախիկեֆալ տիպարը հիմնական համարելու։ հնագոյնը Փոքր Ասիայում վառն զի դա նորախոսքերով արտայայտուած է արդէն հին կուլտուրական հիատիաների ցեղի խորաքանդակների վրայ։ մինչդեռ գոլիխոկեֆալ տիպարը նորա կարծիքով պիտի վերագրել յատկապէս սեմիտական ցեղերին որոնք տարածուեցան հարաւից։ Արաբիայից, յետին ժամանակներում թէև նոքա էլ հինաւորաց եկւորներ են այս երկրում։ Սակայն նորագոյն հետազոտողներից ամենքս յիշեալ հիատիաներին՝ արամաղիր են քամական ցեղից համարելու։ այդպիսի կարծեաց ոյժ տուեց մանաւանդ Ռապացի ուսո մեական դը—Կառայ որ հիատիաներին նմանեցնում է Պերազդներին, վերջիններս Յունաստանի և Ռապիոյ հնագոյն կուլտուրական բնակիչներն էին։ (տես De-Cara. gli Hethei—Pelasgi. Roma, 1894.)։ Հիատիաները երկրորդ հազարամեակում նախքան Բրիտանի ծնունդն հզօր պետութիւն կազմեցին Ասորիքում և Փոքր Ասիայում, մի պետութիւն որ մաքառում էր Եգիպտոսի և Ասորեստանի դէմ և թողել է բազմաթիւ կուլտուրական յիշատակներ, ջրուած Ուրմիրից մինչև Եփրատ գետի վերին հոսանքը։

մասամբ արձանագրու թիւններ որոնք սակայն մինչև այսօր անվերժանելի են մնում։ * Բայց Բամիտները մինչև այժմ էլ ունին ներկայացուցիչներ հիւսիս—արևելեան Ափրիկէի մի քանի ազգութիւնների մէջ, իսկ ի հնունդ գոցա թուին էին պատկանում Եգիպտացիքն էլ և այս բոլոր ազգերի յատկանիշն ընդհանրապէս գոլիխոկեֆալ է։ աւելի նշանաւոր կերպով արտայայտուած, քան սեմիտների մէջ։ Պրօֆ. Սեռջի՝ Լուշանից բոլորովին տարբեր կարծիք է յայտնում վերոյիշեալ երկու տիպարների մասին։ Սա ընդհանրապէս կարծում է՝ թէ գոլիխոկեֆալ տիպարը աւելի հին է որ ընդդրուած է համարեա թէ Միջերկրական ծովի ափերի դաւառների բոլոր հին ազգերը այն է Բերբերներին, հիւսիսային Ափրիկէի Եգիպտացիներին, Ասորաց և Փոքր Ասիոյ հնագոյն բնակիչներին, Պերազդներին, Էթրուսկներին, Լիգուրացւոց, Ռեւացւոց։ Այդ ազգատոհմը Սեռջիի կարծիքով դուրս եկաւ հիւսիս—արևելեան Ափրիկէից (Նեղոս գետի ափունքների գաւառները) և բնակեցաւ Եգիպտոսում Լիբիայում Ասորիքում և Փոքր Ասիայում անցաւ Յունաց կրդիներ, Յունաստան, Սիկիլիա, Սարդինիա, Ռեւական Ռեւա կղզին, մտաւ Հելլեֆիա, Փրանսիա, Անգլիա, Ուլանդիա, ապա Կովկաս, Ղրիմ, Հարաւային Ռուսիա և Դանուբի կողմերը, (տես. G. Sergi. Ursprung und Verbreitung des Mitelländischen Stammes, deutsch übersetzt von Dr Byhan L. 1897)։ Այդ ազգատոհմը հիմն դրեց Եգիպտոսի, Հիատիաների, Յունաց, Էթրուսկների հնագոյն կուլտուրաներին, որոնք զարգացան յառաջ քան արիական ցեղերի տարածուիլն ամենայն կողմեր, սակայն արիք յետոյ գերազանց գանուելով ուրիշներից, կամաց կամաց խառնուեցան հին բնակիչների հետ, ընդունեցին նոցա կուլտուրան, հաղորդեցին նոցա իւրեանց լեզուն և այլ զուտ առանձնայատկութիւնները։ Սեռջիի

* Մոսկուայի կայսերական Հնայեսական Բնկիւրոսկան Արեւելեան յանձնարարի նախագահ յեզուացիս Վ. Միլլեր (Լագուեան ձեմարանի ղրեկօրը) այս աշխատ յանձնարարի վերջին նիստում միանգամայն ենթից պրօֆ. Ենակնի կարծիքը Հիսթիսների և Հայերի մասին։

կարծիքով, արիական ազգաբնակչութիւնը Եւրոպայում հանդէս եկաւ, յատկապէս երեք հասանքներով՝ կելտական, գերմանական և սլաւոնական։ Բայց զորա կարգին կարելի է վերագրել նաև ուրիշ, ոչ այնքան նշանաւոր արիական բարբառներ, որով խօսում են Յունաստանի, Իտալիոյ և Փոքր Ասիոյ ազգութիւնները։ Մինչդեռ ուրիշ շատ հետազոտողներ արիական արիւարը համարում են գոլիթոկեֆալ և, ըստ մեծի մասին, շիկահեր, ենթադրելով՝ թէ բրախիկեֆալների թուրքի աստուածութիւնը սլաւ ազգերի, գերմանացիների, Փրանսիացիների և այլոց մէջ մեկնելու է այդ արիւարի անհետանալովը և թէ զորան փոխարինում է Եւրոպայի աւելի հին, ոչ արիական այլ միայն արիացած ազգաբնակչութիւն։ Սեռ ինչ, բնդ հակասակն պնդում է, թէ այդ բրախիկեֆալական արիւարը է բուն արիական արիւար, որ Եւրոպայի շատ տեղերից արտաքսել է հնագոյն գոլիթոկեֆալականը, որ յատուկ է Միջերկրական ծովի ափերի ցեղերին և որ դեռ մինչև այժմ յարատեւում է հարաւային Իտալիայում, Անգլիայում, Սպանիայում, Եգիպտոսում, Փոքր Ասիայում և այլն։ Ուրեմն, այս Թէօրեայի վրայ յենելով՝ բրախիկեֆալական Հայերին կարելի է համարել եւ որ արիական ազգատոհմի տարրեր ցեղերից մէկն, որ միջամուխ է եղել այն երկրներ, որտեղ առաջ բնակւում էին Միջերկրական ծովի ազգատոհմի (средиземноморской расы) գոլիթոկեֆալական ցեղերը, այն ինչ, թէ ընդունենք Լուշանի կարծիքը, Հայերը Փոքր Ասիոյ տեղական հրնագոյն ազգատոհմի սերունդք են, որոնք պաշտպանել են իւրեանց արիւարը սեմիտական ցեղերի, Յոյների և այլոց ազգութիւններից։ Այդ տեսակէտներից զմէկը կարելի է հաւանական համարել։

Այն հանգամանքը, որ բրախիկեֆալական սեւագոյն մազերով ու աչքերով արիւարը ներկայումս շատ տարածուած է Փոքր Ասիայում, հաստատուած է բազմաթիւ գիտողութիւններով։ Բժշկապետ Վէյթսթախ հանդիպեց այս արիւարին հին Բիւթանիայի արգեան բնակիչների մէջ, Ու. Վիրխովը—Փոքր Ասիոյ հիւսիս—արեւմտեան անկիւնի Յոյների մէջ։

Ունեցեալ քաղաքի մօտ հին գերեզմանների մէջ, որոնք, ըստ երեւութիւնի, պատկանում են երրորդ դարուն Բրիտանիոյ պեղումներ կատարուեցան և այնտեղ յայտնուեցան մի շարք մեծ ու բրախիկեֆալական դանդեր։

Վիրխով չափել է նոյնպէս այն գանգերը, որ գտել էր Շլիմանը Հիստորիքում (հին Տրոյապոլսում) արած պեղումների միջոցին, և համարել է, որ մինչև անգամ հնագոյնները նոցանից, երկրորդ հազարամեակում նախ քան զԲրիտանիոյ բնորոշ բրախիկեֆալական են, նոյն տեսակից են նաև հին Աստուքաղաքի աւերակներում, Ամերիկացի ոչհնագիտական խուզարկութիւնների ժամանակ գտնուած գանգերը։ Այդ բոլորը համեմատելով Հայոց գանգերի հետ, Վիրխովը արմադիր է Լուշանից աւելի հեռու գնալու և կռնելու այդ ամենը ոչ թէ Հայոց ծագումից յառաջ եկած, ինչպէս նա (Լուշան) է կարծում, այլ ուղղակի հայկական։ (Luschan—Virehow—въ отчетѣ о сѣздѣ Германскаго антропологическаго общества 1892 года)։ Այնու ամենայնիւ, նա ակնարկում է, թէ նոյնպիսի բրախիկեֆալական յատկութեամբ օժտուած են և մի քանի և այլ ազգութիւնների, որ, Ալբանացիք, որոնց մէջ շիկահեր անհատները գերակշռում են։

Յամենայն դէպս եթէ Փոքր Ասիոյ այս հիւսիս—արեւմտեան բրախիկեֆալները երեւեցան, ինչպէս ենթադրում են, Բ. հազարամեակում Բրիտանիոյ առաջ, ուրեմն աւելի հեռու գեղի արեւելք, բուն Հայաստանի սահմաններում այս արիւարը հանդէս եկաւ հաւանական է, աւելի ուշ, և այդ հանգամանքը սերտ կապուած է նաև պատմական տեղեկութիւնների հետ Հայերի մասին, որոնք վկայում են, թէ նոքա (Հայերը) այստեղ եկել են ոչ յառաջ քան Ը. դարն, նախ քան զԲրիտանիոյ։ Որչափ յայտնի է, Անգրիկովիստու նախապատմական գերեզմաններից դուրս հանած գանգերի մէջ գերակշռում է գոլիթոկեֆալական արիւարը, որ հայկականից տարրեր է և հաւանական է, որ պատկանում է Ուրարտու երկրի բնակիչներին (ոմանք այդ բնակիչներին կոչում են Մասալիք, հետեւելով հին Յունացի ցուցումներին)։ Նոքա երկար ժա-

մանակ պատերազմներ էին մղում Ասորեստանի դէմ և թողել են մեզ շատ հետաքրքիր բեկնադիր արձանագրութիւններ, որ յետին ժամանակներս ուսումնասիրում են Պ. Պ. Մ. Նիկոլսկի, Վ. Բեկլը և այլն: Այսպէս ուրեմն, զոնէ՛ փոքր Ասիոյ արեւելեան մասում բրախիկեֆալական հայկական տիպարը պէտք է համարել յետին, եկտր, որ միջամուխ է եղել գոլիստիկեֆալական տիպարի երկրերը:

Եթէ ինկառի տուններ այն դէպքը՝ թէ գոլիստիկեֆալները գերակշռում են նաև Եգիպտոսի Ասորոց, Յունաստանի, Իտալիոյ, Պիրինէի թերակղզու հնագոյն գերեզմաններից արտահանած գանգերի մէջ, թէ դոքա ներկայումս էլ բնորոշում են հիւսիսային Ափրիկէի Սպանիոյ, հարաւային Իտալիոյ և այլոց բնակիչների տիպը, այն ժամանակ Սեռլիի ենթադրութիւնը՝ Միջերկրական ծովի ազդատոհմի տարածութեան մասին ի հնում հաւանական է դառնում փոքր ի շատէ՛, թէ և լիովին չէ բացատրում, թէ ի՞նչպէս է դոյացել Եւրոպայի արդի բնակչութիւնը այս ազդատոհմի խառնուելուց արիական յեղերի հետ: Բանը նորանում է, որ այդպիսի գոլիստիկեֆալական զանգեր մենք զանում ենք ինչպէս միջին Եւրոպայի քարեդէն դարերի գերեզմաններում, այնպէս և միջին դարերի սկզբի (մինչև 10-րդ դարը) գերեզմաններում՝ Փրանսիայում, Գերմանիայում, Ռուսիայում ևս և այնպիսիների մէջ, որոնք, անտարա կոյս, պատկանում էին Գերմանացոց և Սլաւ ազգերին: Դա ապացուցանում է, թէ գոլիստիկեֆալական տիպարը երբեմն տարածուած էր նաև արիական ազգերի մէջ, սմանք կարծում են թէ դա նոցա մէջ մինչև անդամ գերակշռող էր: Ուրեմն՝ պէտք է ընդունել, որ դա այս դէպքում նման էր Միջերկրական ծովի ազդատոհմին և թէ բրախիկեֆալների յետագայ յառաջ խաղացումը պայմանաւորուած էր ոչ թէ արիական տարրով, այլ մի ուրիշ պատճառով, ինչպէս կարծում են սմանք—միջին Եւրոպայի արխացած բնակչութեամբ, որ նուաժուած Արեւաց ձեռքով, սեպհականել է իրան նոցա լեզուն, բայց իւր բաղմաթուութեան, կենսունակութեան և բաղ-

մածնութեան շնորհիւ, կամաց կամաց դերակշռող հանդիսանալով՝ իւր տիպարի տիրապետութիւնը հաստատել է միջին Եւրոպայի և Եւրոպական Ռուսիայի ժամանակակից ազգաբնակչութեան մէջ:



ՄԻ ՀԱՏՈՒԵԾ

ՌՈՍՏԱՄ—ԶԱԼ

Վ. Գ. Բ. *

Դարիւն ի. տաս օր նիսան ** գնացիր, քսան մնացիր:

Ռոստամ ուր մարտիւր ժողովից, ասաց կուրուղուն: Դնա սահրանգէն տըսի, չայիբէր չինուէր, թի չէ, ծաղկաթիւ եղիւ ի, թի չէ, մհինք¹ ալլուբէր եղիւ ի, մհա վերու² օշխար կայ մէ, խաղալ կայ ինի, մինք տերթանք սահրանգին³ սէհր անելիւ:

Էլաւ զթխթիւր գրից, յրեողկից քաղքնէք: Մերաբէ Բարլին ուր կուշումով իրի⁴ ծիսէ Սաղարի ուր կուշումով իրի, յրեողկից գիողարզ ուր կուշումով իրի, յրեողկից Զանգէ, Շահուրի իրի, յրեողկից Դիւ իրի, փալաւանքաթիւ բիրադի բարաւից⁵:

1. Արտասեղիներ. 2. տեսնել 3. վայրենի

4. զրօսարան. արարան 5. եկաւ 6. ժողովից:

* Ռոստամ—Զալ Պարսից ժողովրդական վիպ է, որ մինչև այսօր էլ պատմում եւ չայ ժողովուրդը զանազան վարիաններով և քարտուկերով, զոնէ մեզ յայտնի են Մոկաց և Արարանցից (Մշի) քարտուկ: Ներկայ հաստատով Մոկաց վարիանից մի փոքրիկ եմուշ ենք ցայիս, յուսալով կարճ ժամանակից յետոյ ևս ամբողջ նրասարակել առանձին գրելովով: Ֆիրդուսու ներկին ծանօթ ընթերցողը նկատել կարող է, որ այս հաստատը Ռոստամի Թուրանում կատարած որսորդութեան ճեպարանն է: Մեզ համար առանձնապէս նշանակալից է այս վիպը նորանով, որ Մոկսիս նորեկացու ժամանակներն իսկ գոյութիւն ունէր Հայոց մէջ: Արարանցից վարիանով պարսից վիպի հերոսներն ու Սասնայ ծոերը ցեղակից են իրար: Այս խնդիրները, ինչպիսի և վիպի ճակ—նամեկի հետ ունեցած առնչութիւնը կաշխատենք պարզել առանձին յօդուածով:

Գ. Վ.

** ԾՆՆ — Նիսան Բարախիցիներէ ինչպիսի ևս սեմական ուրիշ ազգերի մէջ տարուայ, առաջին ամիսն է, որ մօտաւորապէս մարտ ամիսն էր սկսում: